ԱՐՇԱԿ ԱԲԵՂԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

ԺԸ դարի երկրորդ կեսից սկսած, Հայ Եկեղեցին ներկայացուցչական բացառիկ լիազորություններով օժտեց իր սպասավորներին, ովքեր նվիրակի հանգամանքով շրջելով աշխարհով մեկ սփռված հայության մեջ, իրականացնում էին ոչ միայն Եկեղեցու փրկագործական առաքելությունը, այլև հետապնդում ազգային ինքնությունն անեղծ պահելու նպատակ: Դուրս գալով Ս. Էջմիածնից՝ նվիրակներն իրենց հետ տանում էին Արարատյան աշխարհում բռնությունների տակ կքած ու ճնշված հայ ժողովրդի հառաչանքը, ինչը փոխանցելով օտար ափերում ապաստանած հայերին, հորդորում էին ˙զորավիգ լինել հայրենի երկրի հայությանը, ջերմ ու անկեղծ զգացումներով լցվել դեպի հարազատ բնօրրանը:

Մինչև ԺԸ դարի կեսերը նվիրակության վերաբերյալ մեզ հասած տեղեկությունները, չափազանց աղքատիկ լինելով հանդերձ, որոշ թույլ պատկերացում տալիս են եկեղեցական այս կարևորագույն կառույցի նախնական գոյության վերաբերյալ: Այս մասին առաջին անգամ հիշատակում է Ստեփանոս Օրբելյանը: Համաձայն Սյունյաց տան պատմիչի, Կիլիկիայում գահակալած Գրիգոր Անավարզեցի Կաթողիկոսի օրոք (1293-1307) Արևելյան Հայաստան է եկել Կոստանդին վարդապետը, ում Կաթողիկոսի կողմից նվիրակի կարգավիճակ էր շնորհվել: Ստեփանոս Օրբելյանի հիշատակությունը հետևյալն է. *«Իսկ մեք հանապազ աղեգաւ և լերդախոց լինելով ի վերայ այսր ամենայնի՝ հաշեալ մաշէաք ծխական խորհրդովք ի տուէ և ի գիշերի. և ոչ գոյր տեղի յուսոյ կամ ապաւինի, զի սակաւ մի ախոյեան առից ընդդէմ կալ հոգևոր մարտին: Երկնչէաք եթէ յաւուրս մեր զարթնու չարն ի պատերազմ ընդ եկեղեցւոյ. և յարուցանէ մրրիկ խռովութեան ի մէջ մեր. և ընթադրեալ կործանէ զսնկյիքոր մնացուած ազգիս. յաղագս որոյ պատճառանաց ի գալ նուիրակի նորա Կոստանդեայ՝ եպիսկոպոսին Կեսարու, միաբան խորհրդով եպիսկոպոսաց աշխարհիս և իշխանաց գրեցաք մեք թուղթ մայրթանաց, նաև ողջամիտ հաւատոյ և կարգաց Հայաստանիս եկեղեցւոյ առ կաթողիկոսն մեր Տէր Գրիգոր ոչ հիվանդանալ անողջանալի ցաւօք, որ իբր զքաղցկեղ ճարակէ յակյան թօթափել զհաստարակ անդամս եկեղեցւոյ. զոր և նուիրակին*

այն գիտելով զանձանց վէրս՝ ոչ կարէր յանձն առնուլ զդարմանն թոթոյն բաղբաղելով պատճառանս ինչ»[1]:

Կոնստանդին նվիրակի գործունեության մանրամասները թեև լուսաբանված չեն վկայակոչության մեջ, սակայն նրա՝ Կիլիկիայի Կաթողիկոսության նստավայրից Արևելյան Հայաստան գործուղվելու իրողությունն արդեն իսկ խոսում է Հայ Եկեղեցու մեջ կիրառվել սկսվող այն գործընթացի մասին, որ գերագույն իշխանությունը եկեղեցական վարչության միավորների՝ թեմերի հետ հարաբերվում էր նաև նվիրակի միջոցով:

Պատմական մեկ ուրիշ աղբյուրից տեղեկանում ենք, որ Մովսես Տաթևացի Կաթողիկոսի օրոք նվիրակներ են առաքվել տարբեր տեղեր: Այս նվիրակների առաքման նպատակի մեջ արդեն որոշ չափով պարզաբանվում է նվիրակության գործառնական իրավասությունը:

Համաձայն Առաքել Դավրիժեցու հաղորդած տեղեկության, Մովսես վարդապետը, Կաթողիկոս դառնալուց հետո, ձեռնամուխ է լինում Մայր Տաճարի վերանորոգման աշխատանքներին և իր աշակերտներից շատերին ուղարկում նվիրակության: «*Առաքեաց [...] ի նուիրակութիւն,*- գրում է Առ. Դավրիժեցին,- *զի բերցեն ինչս յօժանդակութիւն նորոգման սուրբ Աթոռոյն Էջմիածնի*»[2]:

Հատկանշական է, որ նվիրակների առջև բացառապես դրամ հավաքելու խնդիր չի դրվում: Այս հանգամանքը կրկին ու կրկին առնչակցվում է Հայ Եկեղեցու հավաքած կամավոր նվիրատվությունների սկզբունքայնությանը: Իսկ այս սկզբունքը պարտադիր դրամահավաքության գործողություն չէր ներառնում: Հավատացյալն ազատ էր Մայր Եկեղեցուն տալու այնպիսի նվեր և այնքան քանակությամբ, որքան ինքը կցանկանար: Ահա այս իրողությունն է նվիրակության եզրի ստուգաբանման բանալին: Անտարակուսելիորեն **նվիրակ** բառը առաջացել է հայ հոգևորականների կամավոր նվիրատվություններ ժողովելու իրողության հիմքի վրա: Սակայն հոգևոր գործունեության մեջ նախնականորեն դրսևորված այս գործառույթը աստիճանաբար զատորոշվելով, ստացել է եզրաբանական հատուկ իմաստ՝ մատնանշելով հայ եկեղեցական կառույցում ձևավորված հատուկ երևույթ: Հայ եկեղեցական իրականության մեջ նվիրակի հանգամանք էր հաղորդվում եպիսկոպոսի կամ վարդապետի աստիճան ունեցող հոգևորականներին, որոնց ուղեկցում և ծառայության մեջ օժանդակում էին մեկ կամ մի քանի ցածր աստիճան ունեցող սպասավորներ: Նվիրակների հանգամանքն ու գործունեության ծավալման վայրերը վավերացվում էին Կաթողիկոսական հատուկ կոնդակով, մի փաստաթուղթ, որը նվիրակի գործունեության կանոնականության գլխավորագույն տարբերանշանն էր:

---

[1] Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 448-449:

[2] Առաքել Դավրիժեցի, Գիրք Պատմութեանց, Երևան, 1990, էջ 209:

Կաթողիկոսական բարձրագույն հրահանգով նվիրակության մեկնած շատ հոգևորականներ, որոնք ունեին իրենց սրբազան առաքելության բարձր գիտակցությունը և բարոյական փորձառության հարուստ պաշար, օրինիբուն տքնությամբ նվաճում էին հեռաբնակ հայերի համակրանքը և այն ծառայեցնում հայության միավորման մղումների շրջագծում Մայր Աթոռի պայծառությանը:

ԺԷ դարի սկզբներին նվիրումի ու զոհողության տիպար այսպիսի երեք նվիրակներ են առաքվում Բյուզանդիոն: Այս հոգևորականները՝ Հովհաննես եպիսկոպոսը, Սարգիս եպիսկոպոսը և Դավիթ աբեղան, բոլոր ու եռանդուն գործունեությամբ են աչքի ընկնում թուրքահպատակ հայերի մեջ: Նրանք խանդավառ հայրենասիրության ու եկեղեցասիրության են կոչում տեղի հայերին և «*խոսքն ի գործ*» նպաստում ազգային գիտակցության զորացմանը: Սակայն նվիրակ հոգևորականները ծառայության ընթացքում նահատակվում են՝ ուժգին տպավորություն գործելով կայսրության մայրաքաղաքում բնակություն հաստատած հայերի վրա: Հետագայում բյուզանդահայերը չափածո մի գողտրիկ ստեղծագործությունում մեծարում ու փառաբանում են «*սրբոց նման*» երեք հոգևոր սպասավորներին: Ներկայացնենք մի հատված այդ պատումից.

«Ինքն հարիւր հայոց թուական,
Յիսուն և հինգ թիւ աւելեան,
Էջմիածնէն նուիրակք եկան,
Բոլոր աշխարհս հոռոմոց տան:

Յոլով մեռոն կայ ընդ ինքեան,
Մեծ նամակով և օրհնութեամբ,
Եկեալ հասին Բիւզանդիան,
Որ է Սպանպոլ, սրբոց կայան:

Անուանք նոցա համբաւեցան,
Սուրբ օրհնութիւնք, որ կարդացուան,
Եկեղեցիք բերկրեալք ցնծան,
Եւ ժողովուրդս, որ օրհնեցան:

Դիրեր եկին մեզ աննման,
Ջինչ հրեշտակք Աբրահամեան,
Ոնց սպանպոլցիք զնոսա տեսան,
Տեառն Աստուծոյ շատ գոհացան»[3]:

---

[3] Ս. Կանայան, Էջմիածնի նվիրակությունը ԺԸ դարում, «Էջմիածին», 1977, Բ, էջ 52-53:

Բանասիրծության պողերն ակնհայտ գնահատանք են պարունակում խանդեպ նվիրակների գործունեությունը, ինչը հիմք է տալիս այն ենթադրության, թե նվիրակները բավականաչափ լայն ճանաչում էին գտել հայկական գաղթօջախներում արդեն ԺԷ դարի սկզբներին և ունեին բավականին բարձր հեղինակություն:

Նվիրակությունը լայն ծավալ էր ստացել նաև Լեհաստանում բնակված հայության մեջ: Սակայն նվիրակի հաջողություններով ցնծացող հայորդուց փարբեր հայացքով են դիտում նվիրակությունը, օրինակ, Լեմբերգում գտնվող կաթոլիկ պապերները:

«Եկեղեցականք հայոց,- գրում են նրանք, - *ոչ ունին բիրեանց պապացուածս, այլ կեան գրիւք ժողովրդեանն. նաև ինքն կաթողիկոս գրեա թէ ամի ամի առաքէ ի գաւառսն, որ ընդ իւրն՝ արս կոսն գրեա թէ ամի ամի առաքէ ի գաւառսն, որ ընդ իւրն՝ արս նուիրակս ժողովել նուէրս և ի վաճառել զմիւռոնն: Զորս ոչ կամոն նուիրակս ժողովել նուէրս և ի վաճառել զմիւռոնն: Զորս ոչ կամին վին գայցենն իր նուիրապտութիւն կամ յանձինս գրաւիցեն զհասս կաթողիկոսին՝ սրիպեն զնոսա սպառնալեօք նզովից, և բռնի հանեն ի բաց իրս, զորս ոչ պան նոքա»*[4]:

Հայոց Եկեղեցու հավատացյալների հավատափոխությունը նախապատրաստող կաթոլիկ Եկեղեցու տրամադրությունն արտահայտող հոգևորականը հայտնելով նվիրակության վերաբերյալ իր խիստ սուբյեկտիվ և որևէ տրամաբանական հիմք չունեցող կարծիքը, ակամա հաստատել է մի փաստ, որ կաթոլիկները Լեհաստանի հայերին դավանափոխելու ճանապարհին լուրջ խոչընդոտներ էին գտնում իրենց առջև՝ հանձին նվիրակների նախանձախնդրության: Իսկ ինչ վերաբերում է նվիրակությունը բռնության հետ զուգակցելու մասին պատերի հաղորդած տեղեկությանը, ապա բնական մտածողության սահմաններում հազիվ թե տեղավորվի այն գաղափարը, թե Էջմիածնից առաքված հայ հոգևորականը հնարավորություն ուներ հարկադրանքի միջոցով տուրքեր հավաքել: Եթե նվիրակն այսպիսի պարտադրանքի առջև էր կանգնեցնում հավատացյալին, ապա միմիայն շնորհիվ Հայ Եկեղեցուց բխած բարոյական հեղինակության և այդ հեղինակությունը փոխանցողի իր արժանիքների: Հակառակ ընդհանրական կոչվելու հավակնություն ունեցող Եկեղեցու սպասավորների հերյուրանքների, պատմական մի վավերագրում հստակորեն ընդգծվում է նվիրատվություններ ընդունելու ողջ բարոյական հիմքը: Նվիրակությունն այստեղ ներկայանում է որպես միջնորդավորող օղակ Ծնող-Եկեղեցու և որդի-հավատացյալի միջև: *«Պաշտօն նուիրակաց է՝ ընդունել շնորհակալութեամբ և օրհնութեամբ զնուէրս և զընծայս, զորս ջերմեռանդութեամբ սիրոյ որդիութեան բերեանց՝ յանուն յուսածին ծնողի*

[4] Դ. Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը 19-րդ դարում (1800-1900), հտ. Ա, Բագու, 1913, էջ 87:

իւրեանց սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի, կամ ի վայելս անձին իւր իսկ նուիրակն, նուիրել ունիցին ի ձեռս իւրեանց, հարուստք և աղքատք ծնունդք հարազատք սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի ծնողասէր և Աստուածասէր ազգին մեր հայոց»[5]:

Փաստաթղթի հեղինակը Եկեղեցու և հոտի միջև կապը ներկայացնում է ամենամտերիմ մերձակցական հարաբերության մեջ, ինչն այլևս բաց տարածք չի թողնում նվիրատվությունները բռնությամբ զուգորդելու համար: Ընդհակառակը, նվիրակներն իրենց գործունեությունը համնմում էին նվիրակության անկապտելի մաս կազմող մեռոնաբաշխությամբ: Սրբալույս մեռոնը Կաթողիկոսի գերագահության մեծագույն խորհրդանիշն է: Այս նկատառումով նվիրակներն իրենց հետ օտար ափերում հանգրվանած հայության սփվար զանգվածներին էին տանում մեռոնը: Մեռոնաբաշխությանը զուգընթաց, նրանք պարտավորություն ունեին ներկայացնելու այդ անուշահոտ հեղուկի խորհրդանշած հաստատության՝ Մայր Աթոռի կացությունը: Այս զուգորդումն այսպես է նկարագրվում վերը հիշված փաստաթղթում. «...[Նվիրակը պարտավոր է պատմել] *զողջութենէ և զշինութենէ մօրն յուսոյ՝ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի ... բաշխել երկանց սուրբ ծննդեան նորա զմեռոնն սրբալոյս, որ է իմանալի ամենամաքուր կաթն ստեանց երկնաւոր և անապիսի ծնողութեանն իւրոյ, պարգև մայրենի իւրոց զաւակաց»*[6]:

Սակայն այս ծրագիրը ոչ միշտ էր կյանքի կոչվում: Պատահում էր, որ Մայր Աթոռից դուրս էին գալիս այնպիսի նվիրակներ, ովքեր ոչ միայն վնաս էին հասցնում Ս. Էջմիածնի նյութական հիմքին, այլև ուղղակիորեն հարվածում Եկեղեցու գոյատևման կենսական ակունքին՝ նրա բարոյական դիմագծին: Մայր Աթոռից այսպիսի նվիրակներ «թողարկվել» են հատկապես տխրահռչակ Մելքիսեթ Կաթողիկոսի օրոք, երբ Հովվապետն ինքն իր արարքներով խրախուսում էր նվիրակների կողմից թույլ տրված սանձարձակությունները: Մայր Աթոռում տիրող բարձիթողի և համատարած անտարբերությամբ պայմանավորված իրավիճակը նպաստավոր պայմաններ էին ստեղծել արատավոր հակումների ազատ ծլարձակման համար: Անձնական բարեկեցությանը և շահատակությունների հետամուտ շատ հոգևորականներ, շահարկելով նվիրակության նկատմամբ ձևավորված համազգային հարգանքը, նյութական հարստություն էին դիզում: Իրավիճակի այս մռայլության մեջ, սակայն, կային դեռևս Եկեղեցու սպասավորներ, ովքեր գտնվում էին իրենց բարձրության վրա: Վասպուրականում, օրինակ, դեռևս ամեն ինչ չէր նյութականացվել, և տեղի հոգևորականները ժողովրդի ներկայացուցիչների հետ համատեղ մի բողոքագիր են հղում Մելքիսեթին: Ի

---

[5] Դիվան, հտ. Գ, Թիֆլիս, 1894, էջ 806:

[6] Նույն տեղում:

թիվս այլևայլ մեղադրանքների՝ Կաթողիկոսին ներկայացվում է նաև հետևյալը. *«Եւ երկրորդ անկարգութիւն այն է. որ թէ յինչ երկիր որ նուիրակ յուղարկես՝ նա կու ընտրես՝ յորտեղ որ չար և լիրբ. անզգամ, անամօթ և ամբարտաւան մի կայ. որ ոչ յԱստուծոյ երկնչի և ոչ ի մարդկանէ ամաչէ. զայնպիսիքն կու առաքես, որ զարդարեալ երիվարօք և պճնեալ հանդերձիւք և կրկին պաշտօնէիւք զան, և գոռո-զաբար խրոխտան. և բազում ցոփութեամբ զաշխարհս վրդովեն: Գրոց ամենևին անտեղեակ են և օրինաց բնաւին անձանօթ. և բոլորովին ոչ ճանաչեն հաւատս քրիստոնէութեան թէ զինչ է: Զարդարն և զանմեղն դատապարտեն վասն ընչից. և զանիրաւն իրաւացուցանեն վասն կաշառաց. և ազգայրդութեան հրաման տան վասն արծաթոյ: Գիտեմք թէ առքա ինչ կու հատուցանեն ի Սուրբ Աթոռդ ի ձեռս վեհիդ. զի վասն ագահութեան իւրեանց շրջին և ոչ վասն օգտի սուրբ տանդ. զի զինչ որ ժողովեն. ի գինս այնպիսի երևելի հանդերձի տան, որ ոչ վայելէ քրիստոնէի և ոչ իշխանի. թող թէ կարգաւորի... Շրջին իբրև զբռնաւորս և պճնին. և ի կերակուրս և յըմպելիս ծախեն զժողովեալսն իւրեանց՝ յոլով կաշառս տան բռնաւորաց և բազում տուգանս այլազգաց վասն հակառակաւէր բարուց իւրեանց, վասն որոյ Ազգս Հայոց տաղտկացեալ է ի զարշա-հոտութենէ վարուց այսպիսեացս»*[7]:

Բարեբախտաբար վասպուրականցիների բողոքը, որը բխում էր ազգային Եկեղեցին փրկելու մտահոգությունից, հետագայում ունենում է իր նախանձախնդիր ու համառ արտահայտիչները, ովքեր ոգի ի բռին մարտնչում են լուսավորչաիիմն հաստության անաղարտ պահպանման ու բարեկարգման համար:

ԺԸ դարից սկսյալ, քաղաքական թոհուբոհի մեջ բզկտված Հայ Եկեղեցին աշխուժացնելու ու կենսավորելու փորձերն ու ջանքերը նոր փուլ են թևակոխում: Նվիրակությունը, որն արդեն խավասպել էր իր կարողությունը Եկեղեցու նյութական հիմքերը կայունացնելու ուղղությամբ, սկսեց առավել սևեռուն հայացքի արժանանալ Ամենայն Հայոց Կաթողիկոսների կողմից: Հակոբ Ջուղայեցի Կաթողիկոսի գահակալման շրջանում (1737-1751), Հայրապետի ձեռնհասության շնորհիվ, օսմանյան իշխանություններից ձեռք է բերվում չափազանց կարևոր մի ֆերման: Հրովարտակով օսմանյան կառավարությունը, որոշ ազատությունների հետ, Կաթողիկոսական նվիրակների վերաբերյալ հրահանգում է թուրք պաշտոնյաներին, որպեսզի *«մի ինչ պահանջեսցեն ի նուիրակացն Աթոռոյս»*[8]:

---

[7] Լեո, Հայկական տպագրություն, հտ. Ա, Թիֆլիս, 1904, էջ 145-146:
[8] Սիմեոն Կաթողիկոս, Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 238-39:

Հակոբ Շամախեցի Կաթողիկոսը (1759-63) նմանօրինակ մի արտոնագիր է ստանում պարսկական տերությունից: Նրա դիմելով Երևանի Ալի Հուսեին խանը նվիրակներին արտոնում է ազատ շրջագայել պարսից պետության սահմաններում միաժամանակ մաքսային պարտավորությունների մեջ ունենալ որոշ արտոնություններ[9]:

Պետական մակարդակներում Կաթողիկոսների ձեռք բերած հաջողությունները զուգակցվում էին նվիրակության ինստիտուտի կարգավորման հետ: Աստիճանաբար կանոնավոր կերպարանք են ստանում նվիրակների հավաքած կամավոր տուրքերը: Խորքում այդ տուրքերը թեև շարունակում էին մնալ իբրև բարոյական հողի վրա տրված օժանդակություններ, սակայն այն, որ դրանք որոշակիացված ավանդության ուժով օրենքի կիրառություն էին ստացել, նույպես չպետք է ժխտել:

Մեսրոպ Թադիաղյանի վկայությամբ նվիրակները հավաքում էին հետևյալ տուրքերը.

1. Երեք տարին մեկ անգամ ամեն մի շնչից 40 փարա:
2. Քառասնից. ողորմություն, որը տրվում էր ննջեցյալի մահվան քառասուներորդ օրը և կամ նույնիսկ քառասուներորդ տարելիցին:
3. Հիշատակի համար տրվող արծաթե կամ ոսկե իրեր և սպասքներ, որոնց վրա գրվում էին նվիրատուների անունները և ուղղարկվում Էջմիածին:
4. Խոստմունք. որևէ խոստացված նվեր:
5. Հոգեբաժին. մեկ այլ տուրք մահացածի հոգու հանգստության համար:
6. Խաչհամբույր. տրվում էր նվիրակին, որպեսզի նա նվիրատուի փոխարեն համբուրի Ս. Իջման տեղը:
7. Աջհամբույր. նվիրատուի փոխարեն Հայրապետի աջը համբուրելու համար*:
8. Մատաղ. ոչխար, եզ կամ դրանց համարժեքը՝ Ս. Էջմիածնի միաբանության համար:
9. Գավազանապտոտ. տուրք, որը տրվում էր նվիրակին՝ քարոզի ժամանակ ձեռքում գավազան բռնելու համար:
10. Փոքրավորք. տրվում էր նվիրակի սպասավորին:
11. Ժամուց. այս տուրքը երկու կարգի էր՝ հասնում էր և՛ Կաթողիկոսին, և՛ նվիրակին՝ վերջինիս Պատարագ մատուցելուց հետո:
12. Պաշտոնեից. ընդհանրապես տրվում էր եկեղեցական ողջ դասին[10]:

---

[9] Անդ, էջ 233:

* Կաթողիկոսին առաքված աջհամբույրին հետևում էր Կաթողիկոսական օրենագիրը, որով նվիրատուին շնորհակալություն էր հայտնվում և տեղեկացվում, որ ընծան հասել է: Պարունակած վերջին տեղեկության համար Կաթողիկոսական օրենագիրը բնորոշվել է «Էկաւ հասաւ» արտահայտությամբ:

[10] Մ. Թադիաղյան, Գրական ժառանգություն, հտ. 9, Երևան, 1975, էջ 137-138:

Կամավոր փուրքերի հավաքման համար նվիրակներն ունեին որոշ առանձնաշնորհումներ՝ կապված բուն նվիրակությունից բխած հարկանիշ-ների հետ: Ի տարբերություն մյուս հոգևորականների, Կաթողիկոսական կոնդակով չափազանց բարձր հեղինակություն էր հաղորդվում նրանց: Նվիրակները ի պաշտոնե կոչված էին հայկական գաղթավայրերում ներկայացնելու Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Այս մասին հիշատակվում է Սիմեոն Երևանցի Կաթողիկոսի «Հիշատակարան»-ում ամփոփված մի փաստաթղթում: «...զի ըստ որում փոխանակ Քահանայապետի են. ասվում է այնտեղ,- *որպէս և գրեալն է ի կոնդակն նուիրակական. զորօրինակ ինքեանք՝ ի ներկայութեան Քահանայապետին ունին պահպանել զպատիւ նորին և զգուշանալ անձանց իւրեանց և ամենայն զգայարանաց՝ զի մի՛ անվայելչութիւն ինչ յառաջ եկեսցէ յինքեանց ընդդէմ արժանաւոր պատուոյ Քահանայապետական բարձրութեան. այնպէս պարտին զնոյն զգուշութիւն ունիլ մշտնջե-նապէս մինչդեռ կերպիւ առ ի պահպանել զպատիւ անձանց իւրեանց ճանաչելով զնոյն անձն իւրեանց՝ և անձն փոխանակ Քահանայա-պետի արժանաւոր այնմիկ յարգութեան»*[11]:

Մեկ ուրիշ պատմական վավերագրում նշվում են կաթողիկոսական փուրքերը, որոնք ամենայն հավանականությամբ նույնպես հավաքվում էին նվիրակների միջոցով: Նույն այս փաստաթղթում հիշվում են նաև առաջնոր-դական և քահանայական հարկերը: Վերջիններս թեև իրենք չէին ստանում իրենց հասանելիքը, սակայն Տերունի վիճակներում, որտեղ առաքված նվիրակը միաժամանակ ստանձնում էր նաև առաջնորդական իրավասու-թյուններ[12], առաջնորդական ***«հացքն ու փուրք»***-ը հավաքվում էր նվիրակի կողմից: Ստորև ներկայացնում ենք նվիրակի կողմից հավաքված կաթողի-կոսական ու առաջնորդական փուրքերը:

ա. Կաթողիկոսական փուրքեր

1. Նվիրակության դրամը՝ երեք տարին մեկ անգամ.
2. Հոգեբաժին.
3. Մայր Աթոռի անվամբ հավաքած գանձանակի գումարը.
4. Խոստմունք.
5. Քառասնից.
6. Կտակ.
7. Բազմատեսակ հիշատակներ.
8. Առաջնորդների կողոպուտը, հոգեբաժինը, եկեղեցական զգեստը և ձին:

---

[11] Դիվան, հտ. Գ, էջ 813-814:

[12] Զամբռ, էջ 48:

բ. Առաջնորդական փուրքեր

1. Այգիների և պարտեզների բարիքներից.
2. Հոգեբաժին.
3. Քառասնից.
4. Խոստմունք.
5. Կտրակ.
6. Հիշատակք.
7. Վանքի գանձանակը.
8. Աթոռամասն կամ վանքամասն. փուրք, որը տալիս էր առաջնորդին յուրաքանչյուր կին առնող.
9. Կնքադրամ. երեխա մկրտելու համար տալիս էր ընտանիքը.
10. Կողոպուտք.
11. Դիազարդ. թաղման արարողության ժամանակ տրվող փուրք.
12. Մատաղ.
13. Տյառնական.
14. Հոգևոր պարտավորության գիտակցությունից բխած մի տեսակ կամավոր ընծայաբերություն.
15. Սրբադրամ.
16. Քահանայաթաղ.
17. Այլևայլ փուրքեր, որոնք հավաքվում էին խաչ, եկեղեցի, տուն, պատկեր և այլն օրհնելու համար[13]:

Առաջնորդական կամ եպիսկոպոսական փուրքերի հավաքմամբ նվիրակներն արդեն իսկ իրենց գործառույթներով մոտենում էին թեմական եպիսկոպոսներին: Սակայն առաջնորդ և նվիրակ հասկացությունները հստակորեն սահմանազատված էին: Առաջինն իրականացնում էր Մայր Աթոռի վարչական ներկայացուցչության հետ կապված ֆունկցիաներ, մինչ նվիրակները գերազանցապես գործում էին բարոյական ու հոգևոր միության հաստատման ոլորտում: Նրանց առջև խնդիր էր դրված ոչ միայն արդյունահավաքությամբ զբաղվել, այլև բարոյական մաքրության նախանձախնդիր պաշտպանները լինել:

Բնականաբար, խիստ դժվարին առաքելության իրականացնելու ճանապարհին, նվիրակներն օժանդակության կարիք էին զգալու: Ուստի նրանց հետ գաղութահայության մեջ Մայր Աթոռի շահերը պետք է պաշտպանեին հոգևոր և աշխարհական այլ անձինք ևս: Նվիրակի հետ էջմիածնապատկան վիճակներ էին ուղևորվում նաև հոգևոր կրտսեր աստիճանավորներ, ովքեր նվիրակին օգնում էին ծիսական արարո-

---

[13] Դիվան, հտ. Գ, էջ 825-826:

դությունների ժամանակ, գործուն մասնակցություն ունենում արդյունահանվաքմանը: Հաճախ նվիրակն օրաբար ափերում հայրենի բազմաթիվ ավանդների անհաղորդ մնացած հայությանը հոգևոր բավականություն պատճառելու համար, իր սպասավորներին՝ սարկավագ կամ դպիր, իր վիճակում քահանայական ծեռնադրություն էր շնորհում: Նվիրակին օժանդակելու մեջ քիչ դերաբեր ծառայություն էին մատուցում տեղական բնակչությունից Մայր Աթոռին հավատարմագրված անձինք: Վերջիններս անվանվում էին **գործակալ** կամ **գանձապահ** և նվիրակական դվյալ թեմում իրականացնում դրամական ու վարչա-կազմակերպչական որոշ գործառնություններ: Հիմնականում նրանց էր վստահվում նվիրակությունների նկատմամբ սահմանված հսկողության իրականացումը և բեռների կամ դրամի Մայր Աթոռ տեղափոխումը: Պատասխանատվության չափազանց բարձր զգացում պահանջող այս ծառայությունը, ինքնաբերաբար, պատահական մեկին չէր կարող հանձնվել: Ուստի գործակալի կամ գանձապահի պաշտոնն ստանձնելու համար պահանջվում էր անմիջաբար Կաթողիկոսի համաձայնությունն ու նշանակման հրահանգը: Հաճախ վերջիններս ընտրվում էին նվիրակի միջնորդությամբ՝ տեղացի հայտնի անձանցից, ովքեր քիչ թե շատ ճանաչում էին գտել եկեղեցական գործերի շրջանակում:

Նվիրակի գլխավորած այս փոքրիկ խումբը կոչված էր պահպանելու ազգային արժեքներն ու հայության գիտակցության մեջ դրոշմելու ինքնուրույն դիմագծի պահպանման անհրաժեշտությունը: Եվ ի՞նչը կարող էր առավել օգտավետ ծառայել այս նպատակին, եթե ոչ հայության ազգային ինքնության բոլոր լավագույն ձգտումներն իր առաքելության մեջ պարունակող Ս. Էջմիածնի գաղափարի հզորացումը: